ձին, էկաւ հոդի, դուռ կայնաւ. ու ձիուց իջաւ, ու ձին կապեց դուռ, էկաւ, մտաւ ներս. էկաւ, տեսաւ մէկ հալիւոր մարդ, մէկ լէ ուր ախչիկ նստուկ էն էդ յոդէն։

Բարև տուեց հալիւորուն։ Բարև առաւ, ըսեց.—Բարով, հաշար բարով, Մհեր։

Ըսեց.—Դու ի՞նչ գինաս, օր ես Մհերն իմ։

Ու նստաւ։

Ախչիկ էլաւ, գնաց, Մհերի ձին քաշեց ներս, կապեց։

Հալիւորու անուն լէ Փիրմուս է, ախչկայ անուն լէ Դեղձոն։

Ըսեց.—Փիրմուս, իդա քաղաք յո՞րի մարդ չկայ։

Ըսեց.—Էդոնք ըմէն քու յախուն փախած, էլած սարեր։

—Ա՛խչի, էլի՛ տես, ճամբով ձիաւոր կ'իգա՞յ։

Ախչիկն էլաւ, տեսաւ, օր մէկ ձիաւոր կ'իգայ։

Էկաւ, օր Խոր-Մանուկն է. էկաւ, ձիուց իջաւ. քաշեցին ձին ու ներս կապեցին։

Ու Խոր-Մանուկ էկաւ, հոն նստաւ։

Մնաց էդ տեղ յարի լուս։

Ըսեց.—Փիրմուս, Դեղձոն տուր Խոր-Մանուկին։

Տուեց Խոր-Մանուկին Դեղձոն։

Մհեր Խոր-Մանուկին թողեց էդ տեղ, ու քաշեց ուր ձին, հեծաւ, ընկաւ ճամբախ[1]։

Քշեց Պաճիկ Թագաւորի քաղքի վրէն. քշեց քաղքի վրէն ու քաղաք առաւ ձեռ ջարդել։

Ջուաբ տարան Պաճիկ Թագաւորին թէ՝—Մհեր մկայ քու քաղաք կ'աւիրայ։

Պաճիկ Թագաւոր լէ առաւ ուր վաքիլ, վազեր ու սինօդներ ու էկաւ Մհերի առէջ, ըսեց.—Մհե՛ր, իմ քաղքին դագմիշ մ'էղնի։

---

[1]) Ա. վարիանտով Քուռկէ-Ջալալթիկ սանձը Մհերից խլելով նորան Բաղդադ տարաւ։ Մհեր առնում է Խալիֆայի աղջիկը, բայց առանց կռուի։